ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

06.06.2012թ.
173-ի 7

ՀՀ կառավարության աշխատակազմի
ղեկավար պարոն Դավիթ Սարգսյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Սարգսյան,

2012թ.-ի մայիսի 30-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը դիմել էր ՀՀ Տրանսպորտի եւ կապի նախարարությանը՝ խնդրելով հայտնել, թե ի՞նչ փուլում է գտնվում ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարության կողմից ներկայացված “Ինտերնետ ցանցում պետական մարմինների պաշտոնական կայքերին ներկայացվող պահանջները հաստատելու մասին” ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման գործընթացը:

Ի պատասխան՝ նախարարությունը հայտնել է, որ 2012թ.-ի ապրիլի 4-ին վերոնշյալ նախագիծը 01/16.1/3264-12 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը:

Ուստի, ելնելով վերոգրյալից՝ խնդրում ենք հայտնել, թե ի՞նչ փուլում է գտնվում ՀՀ կառավարության որոշման վերոնշյալ նախագծի ընդունման գործընթացը:

Կից ներկայացնում ենք ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարության պատասխանի պատճենը:

Կանխավ շնորհակալություն:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան